

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ

ՈՐՈՇՈՒՄ N 11/2

ք. Երևան  
2020թ.

12 մարտի

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԲԱԿԱԼԱՎՐԻ ԵՎ  
ՄԱԳԻՍՏՐՈՍԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ  
ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐՈՒՄ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ  
ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Երևանի պետական համալսարանի կանոնադրության 49-րդ կետի 4-րդ ենթակետով, Երևանի պետական համալսարանի գիտական խորհրդի կանոնակարգի 4-րդ կետի 4-րդ ենթակետով՝ Երևանի պետական համալսարանի գիտական խորհուրդը որոշում է.

1. Հաստատել Երևանի պետական համալսարանի բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերի մասնագիտական դասընթացներում հետազոտական աշխատանքի կատարման կարգը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2020թ. սեպտեմբերի 1-ից:

ԵՊՀ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝

Գ. Գ. ԳԵՎՈՐԳՅԱՆ

Հաստատված է  
ԵՊՀ գիտական խորհրդի  
2020թ. մարտի 12-ի թիվ 11 նիստում

ԵՊՀ գիտական խորհրդի նախագահ,  
Գ. Գ. Գևորգյան  
12 մարտի 2020թ.

## ԿԱՐԳ

### ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԲԱԿԱԼԱՎՐԻ ԵՎ ՄԱԳԻՍՏՐՈՍԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐՈՒՄ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱՏԱՐՄԱՆ

#### I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Ղեկավարվելով ԵՊՀ 2016-2020 թթ. զարգացման ռազմավարական ծրագրի «Արդիական հետազոտություն և նորարարություն» նպատակի 2.1 խնդրի 5-րդ գործողության իրականացման հանձնառությամբ՝ Երևանի պետական համալսարանի (այսուհետ՝ ԵՊՀ) բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերի մասնագիտական մի շարք դասընթացներում ներմուծվում է հետազոտական աշխատանք:

2. Հետազոտական աշխատանքը ներմուծվում է տվյալ դասընթացի շրջանակում հետազոտության կատարման և ներկայացման միջոցով, որի նպատակն է խթանել ուսանողի անհատական կամ խմբային հետազոտություն կատարելու ունակությունները և նպաստել նրա մասնագիտական հմտությունների զարգացմանը: Հետազոտական աշխատանքը ներմուծվում է դասընթացի տեսական կամ գործնական պարապմունքներին հատկացված ժամերին և ենթադրում է դասավանդող դասախոսի խորհրդատվություն:

3. Հետազոտական աշխատանք ներառող մասնագիտական դասընթացների ցանկը սահմանում է ծրագրի ղեկավարը և հաստատվում է ֆակուլտետի գիտական խորհրդի կողմից: Հաստատումից հետո այն ներառվում է համապատասխան կրթական ծրագրի մասնագրում: Բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերում այդ դասընթացների նվազագույն քանակը երկուսն է, իսկ առավելագույնը՝ վեցը:

## II. ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԲԱՂԱԴՐԻՉԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

4. Հետազոտական աշխատանքը ներառվում է միայն մասնագիտական դասընթացներում:

5. Հետազոտական աշխատանքը մասնագիտական ոլորտին առնչվող, կիրառական նշանակություն ունեցող և գործնական խնդիրների լուծմանը միտված ինքնուրույն անհատական կամ խմբային հետազոտություն է: Այն անմիջականորեն առնչվում է տվյալ մասնագիտական դասընթացի առարկային և խնդիրներին:

6. Հետազոտական աշխատանքը կատարվում է ուսանողի կամ ուսանողների խմբի (առավելագույնը 4 ուսանող) կողմից՝ դասընթացը վարող դասախոսի ընդհանուր ղեկավարությամբ:

7. Հետազոտական աշխատանքը կատարվում է գիտական և հետազոտական ժամանակակից մեթոդների կիրառմամբ: Աշխատանքի արդյունքում ստացված տվյալները վերլուծվում են, և արվում է համապատասխան եզրակացություն:

8. Հետազոտական աշխատանքն ունի վերնագիր և ներառում է հետևյալ բաղադրիչները.

1) դրված հիմնախնդրի և հետազոտության նպատակի հստակ ներկայացում,

2) դիտարկվող հարցերի և թեմաների վերաբերյալ գրականության հակիրճ վերլուծություն,

3) հետազոտական մեթոդի կամ մեթոդական համակազմի նկարագրություն,

4) տվյալների հավաքագրում՝ ըստ դրված խնդիրների,

5) ստացված արդյունքների (տվյալների) ներկայացում և վերլուծություն,

6) եզրակացության ներկայացում,

7) գրականության ցանկ:

## III. ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

9. Դասընթացի շրջանակում կատարված հետազոտական աշխատանքի արդյունքը հաշվի է առնվում տվյալ դասընթացի արդյունարար գնահատականում որպես երկու ընթացիկ քննություններից մեկի գնահատական՝ եզրափակիչ գնահատումով դասընթացի դեպքում առավելագույնը 5 միավոր արժեքով, իսկ առանց եզրափակիչ գնահատման դասընթացի դեպքում՝ 10 միավոր արժեքով:

10. Հետազոտական աշխատանքը գնահատվում է ինչպես անհատական, այնպես էլ խմբային աշխատանքների կատարման արդյունքում: Վերջինիս դեպքում գնահատումն իրականացվում է դասախոսի կողմից ընտրված գնահատման մեթոդաբանությամբ:

11. Դասընթացի հետազոտական բաղադրիչի գնահատումը կատարվում է հետևյալ չափանիշներով և համամասնությամբ.

1) հետազոտական թեմայի արդիականության հիմնավորում և կատարման ինքնուրույնություն՝ առավելագույնը 0,5 (1) միավոր:

2) ստացված արդյունքների հիմնավորվածություն և հավաստիություն՝ առավելագույնը 1 (2) միավոր,

3) ստացված արդյունքների որակական և/կամ քանակական վերլուծություն՝ առավելագույնը 1 (2) միավոր,

4) աշխատանքի բանավոր ներկայացում՝ առավելագույնը 2 (4) միավոր (եթե աշխատանքը կատարվել և տրվել է դասախոսին, բայց բանավոր ներկայացում տեղի չի ունեցել, ուսանողը կարող է ստանալ միայն մյուս չափանիշների գծով տրվող միավորը. ուսանողի ամփոփիչ գնահատականը ձևավորվում է մյուս չափանիշներով),

5) համապատասխան եզրակացությունների առկայություն՝ առավելագույնը 0,5 (1) միավոր

6) հետազոտական աշխատանքում գրագողության հայտնաբերման դեպքում աշխատանքը գնահատվում է «անբավարար»:

#### **IV. ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ**

12. Հետազոտական աշխատանք ներառող դասընթացները բակալավրի կրթական ծրագրում կարող են իրականացվել 4-7-րդ կիսամյակներում, իսկ մագիստրոսի կրթական ծրագրում՝ սկսած 1-ին կիսամյակից:

13. Հետազոտական աշխատանքի թեմաները տրվում կամ հաստատվում են դասախոսի կողմից մինչև յուրաքանչյուր կիսամյակի 3-րդ շաբաթվա ավարտը:

14. Խմբային հետազոտական աշխատանք կատարելու դեպքում, խմբերի կազմը հաստատվում է դասախոսի կողմից մինչև յուրաքանչյուր կիսամյակի 4-րդ շաբաթվա ավարտը:

15. Հետազոտական աշխատանքը դասախոսին ներկայացվում է տպագիր կամ էլեկտրոնային տարբերակով՝ դասախոսի հայեցողությամբ, նրա կողմից սահմանված ժամկետում: